

տակ իջնում է երեսին: Գործակատարն է: Ապտակը դեռ ոչ-  
ինչ, մի բուբլի տուգանք էլ ունի տալու...

Զ.

Մեքոն Եսայան. «Մի բուբլի...», (պատկեր Բալխանու կեանքից),  
1905, Թիֆլիս, 3 կողէկ:

Միևնոյն հեղինակի արտադրութիւնն է և այս պատկերը:  
«Մի բուբլի...»-ի մէջ ևս երևում են դիտողութեան, անկեղծ  
ներշնչումի նոյն յատկութիւնները: Նիւթը դարձեալ գործաւո-  
րական կեանքից է: Հարիւրներով, հազարներով «քնեցնող» ին-  
ժեներները, կառավարիչները, չեն հանդուրժում բնան, որ ի-  
բանց չափ և իրանցից աւելի տանջուող բանուորը մի բուբլի  
աւելի վարձ ստանայ—մանաւանդ խոստացուած վարձ:

—Սոստացել եմ. որ խոստացել եմ, կարծես թէ դազաւոր  
եմ կապել: Հիմա չեմ աւելացնում, մի ամսից յետոյ եմ աւելա-  
ցընում... Կարծես թէ նրանք որ չլինէին, «Վիշապի» գործերը  
աստանովկա էին դառնալու...

Եւ բացի այդ, «բարոյի» 17 բուբլի է ստանում. «Թող  
7-ը ուտէ, 10-ը պահէ. հօ ամբողջ Բալխանին իրան չէին  
տալու...»

Ու այդ սակաւապէտ—ուրիշների կաշուի վրայ—կառա-  
վարիչը զայրացած՝ դուրս է անում և՛ գործակատարին, որ բա-  
նուորների կողմն էր բռնել, և՛ այն խեղճ պարիաներին, որոնց  
խոստացել էին մի բուբլի, միայն մի բուբլի աւելի ոտճիկ վը-  
ճարել: Նրան այդպէս «մեծ-մեծ խօսողներ հարկաւոր չեն»,  
այլ «համեստ տղերք»...

Զ.

Բարթուղիմէոս եպ. Գէորգեան՝ «Վաղարօտապօք և՛ Ս. Էջմիածինը  
խրանց սկզբնական եղումն են:

Այս գրուածքի ոտւերէն թարգմանութիւնը տպած է հա-  
յերէն բնագրի հետ միասին: Հեղինակը մի շարք ապացոյցներ  
է բերում ցրելու Սաչիկ վ. Դատեանի «տարածած դայթակղու-  
թիւնը փողովրդի ամեն խաւերի մէջ.» Սաչիկ վարդապետը  
տարածում էր թէ սկզբնական էջմիածինը Ջուարթնոց կո-  
չուած եկեղեցու տեղումն էր:

Բարդուղիմէոս եպ. ապացուցում է որ նախ քան մեր

ազգովին քրիստոնէութիւն ընդունելը՝ Վաղարշապատի արեւելեան առապարում 3—4 վերստի վրայ գտնուող Ջուարթնոց կոչուած եկեղեցու աւերածի տեղում Ասողոնի-Հերմէսի Նրազացոյց մեհեանն է եղել Բացի այդ, հեղինակը աշխատում է ապացուցանել թէ Վաղարշապատը առաջ կոչուած է եղել Արտաշատ և ընաւ չի կարող չիլն և նոր Վաղարշապատներէ մասին խօսք լինել:

\*

### ՆՈՐ ՍՏՆՑՈՒՄԾ ԳՐՔԵՐ

- 1) Ս. Ռուսովա, «Ջուզէպպօ Գարիբրալդի», կենսագրական. 1904, Բագու, 10 կ.:
- 2) Գ. Ն. «Ուրուանկարներ», հրատ. Ս. Թարվերդեանի, 1904, Բագու, 25 կ.:
- 3) «Վաղարշապատը և Էջմիածինը իրենց սկզբնական տեղումն են», գրեց Բարդ. Եպ. Գէորգեան (Ճուղուրեանց), 1905, Մոսկուա, 20 կ.:
- 4) О. Туманянцъ, Ахтамаръ, народ. легенда, съ арм. перев. К. Бальмонтъ, 1905, Баку ц. 25 к.
- 5) Կանան-Դոյլ, «Դեղին դիմակաւորը», թարգմ. Ն. Ք. Նիկողոսեան, 1905, Ալէքսանդրոպոլ, 7 կ.:
- 6) Ջոն Միլլեր, «Նորահաս օրիորդներին բարեկամական խորհուրդ», թարգմ. Ն. Ք. Նիկողոսեան, 1905, Ալէքսանդրոպոլ, 10 կ.:
- 7) «Կանոնք Գունայ Սուրբ Ժողովոյն» ձեռագրի համեմատութեամբ լոյս ընծայեցին Մխիթար վարդապետ և Միքայէլեան Տիգրանեան, (արտատ. Արարատ ամսագրից), 1905, Վաղարշապատ, գին. ?
- 8) «Ռոստամ Ջալ», ժողովրդական վէպ, (մոկաց բարբառով), գրի առաւ Գ. վ. Յովսէփեան, արտատպուած «Ազգագրական Հանդիսից», Թիֆլիս, 1905, դ. 50 կոպ.:
- 9) Ատրպետ, Երկերի ժողովածու, հատոր երրորդ, «Ալմաստ», վէպ Բարձր Հայոց կեանքից, Թաւրիզ, 1905. դ. 1 ր.: